Ալեքսանդր Շիրվանզադե

Անվերնագիր մի պատկեր

Մարտ ամիսը տակավին չէր բոլորել յուր շրջանը, օդի մեջ արդեն տիրում էր գարնանային բուրմունքը: Մաքուր էր երկնքի կամարը, ինչպես խնամող ձեռքով հստակված հակնթագույն ապակի, նոսր էր օդը, թեթև, հեշտաշունչ, որպես եթերքը:

Թևատարած արծիվները սլանում էին անհուն բարձրության վրա: Եվ նրանց երկսայր ստվերները մեղմիկ և արագ սահում էին գետերի մակերևույթով, լեռների և անտառների գագաթներով, դաշտերի ու մարգերի վրա:

Ես նստած էի մի վիթխարի կաղնիի տակ, որի տերևները չէին բացվել, իմ միտքը ակամա սլանում էր դեպի երկնքի խորությունը, և թռչնոց թագուհիների եթերային բարձրությունը իմ ոչնչության զգացումն էր սաստկացնում: Մերթ ընդ մերթ մի աններդաշնակ աղմուկ, մի կոշտ ձայն ընդհատում էր իմ մտածման թելը: Ես նայում էի շուրջս: Ահա անցնում են երկու պարարտակազմ մարդիկ: Իմ ականջիս հասավ նրանց ջերմ վիճաբանության մի դարձվածը.

Կմեռներ նա քաղցից, եթե ես նրան ձեռք չկարկառեի: Նայեցի հակառակ կողմը: Անցնում էին երկու պճնազարդ տիկիններ, հետևելով երկու զույգ հրեշտականման մանուկների: Իմ լսելիքը ընդունեց գեղեցկուհիներից մեկի վերջին պարբերությունը:

Եթե մյուս խանութից գնեի, տասը ոսկի պակաս կվճարեի:

Իմ դիմաց անցնում էին երկու առույգ երիտասարդներ:

Ախ, ինչ գեղեցիկ է գարունը, մարդկային սրտի մեջ նա սփռում է կենսական մի նոր հյութ:

Գնանք ինձ մոտ ճաշելու, պատասխանեց մյուս երիտասարդը, այսօր իմ խոհարարը շոտլանդական կարկանդակ է պատրաստել:

Նայում եմ դեպի վեր: Այնտեղ դարձյալ սլանում են արծիվները: Եղևնիների խիտ ճյուղերի մեջ թաքնված ճնճղուկները ծլվլում են, գետի հանդարտ ընթացքը թմրեցուցիչ օդի մեջ տարածում է մի մեղմ շշուկ: Արևի պայծառ ճառագայթները ջրի տարածության վրա գոյացնում են միլիոնավոր ադամանդներ: Իմ բորբոքված ջղերը զգում են մի հաճոյական անդորրություն: Կարծես ես ուզում եմ նիրհել, նիրհել բնության ծոցում հեռու մարդկային իրարանցումից, հեռու կյանքի ապկանված ալյաց շփումներից հեռու նույնիսկ իմ անձի այն տարրերից, որ երեսնամյա գոյությանս ընթացքում իմ և մարդկային արարածների մեջ հաստատել են մի անխախտելի կապանք:

Սակայն անցուդարձ անող կանանց ու մարդկանց ձայները ստեպ-ստեպ ընդհատում են անուշ նիրհս: Որքա՜ն անախորժ են, որքա՜ն ճնշողական այդ ձայները և որքա՜ն այդ առօրյա կյանքին վերաբերող խոսքերը հակասում են շուրջս տիրող բնության ներդաշնակությանը:

Ես ականջներս փակում եմ, տարածվում եմ մեջքիս վրա դալար խոտի մեջ ու հայացքս ուղղում դեպի վեր ու վեր. որքան նա կարող է թափանցել դեպի խորքը, այնքան հեռու են իմ մտքերը: Վերջապես աղմուկը ընդհատվում է, տիրում է խորին լռություն, լսում եմ միայն իմ սրտի արագ բաբախման զարկերը, ուրիշ ոչինչ: Այնինչ միտքս անընդհատ սլանում է… Կարծես այնտեղ, այն վերօդային անհուն խորության մեջ փնտրում է մի բան, որոնում է մի երևույթ, որին վաղո՜ւց-վաղո՜ւց սպասում էր: Բայց ոչինչ, ոչինչ չի երևում, նույնիսկ միմյանց շուրջը պտտվող և մրցմամբ միմյանցից բարձր սահող արծիվները, կարծես անհետանում են և չքանում:

Հանկարծ հորիզոնի վրա նշմարվում է վարդագույն ամպի մի բեկոր: Նա անշարժ է: Փչում է մի թեթև հողմ, բեկորը մեծանում է, նոսրանում, թափանցիկանում, սփռվում է, ծածկում երկնակամարը մի խայտաբղետ

հաճոյական շղարշով: Մի վայրկյան ևս, և շղարշի ծայրերը հետզհետե սկսվում են սեղմվել, ծալվել և եգիպտական թագուհու ձյունափայլ քղանցքի ձևերն ընդունել: Դարձյալ մի վայրկյան, և ահա պատկերանում է մարդկային արարածի մի կերպարանք: Տեսողությունս երկնակամարի վրա որոշում է մի կին: Ամպային շղարշի տակից երևում են պարզ-կինամոնագույն թանձր մազերը, որ սփռվում են նրա գրավիչ ուսերի վրայով դեպի ուռած կուրծքը: Նա նայում է դեպի ետ, և նույն վայրկյանին երևում է մի այր մարդ, մոտենում է նրան: Նրանք ժպտում են միմյանց երեսին: Երկնային զույգը հեռու է ինձանից, շատ հեռու, սակայն ես լսում եմ նրանց ձայնը: Այո, նրանք խոսում են:

Իմ սիրելիս, արտասանում է կինը: Որքան նուրբ է նրա ձայնը, քաղցրահնչուն, կարծես Բեթհովենի անմահ սոնատները նրա տկար արձագանքն են:

Իմ սիրելի, կրկնում է տղամարդը:

Եվ երկուսն էլ համբուրում են միմյանց: Կինը իր գլուխը մեղմիկ թեքում է սիրեցյալի կրծքին: Ես լսում եմ նրա սրտի բաբախման ձայնն անգամ, զգում եմ, թե նրա շնչերակները որպիսի ուժգնությամբ են զարկում: Երկուսն էլ գրեթե միևնույն տարիքի են, միևնույն հասակի, երկուսն էլ բարեհամբույր կերպարանքով: Երիտասարդի խաժ աչքերում վառվում է բանաստեղծական հուրը, կնոջ աչքերը բարի են, գրավիչ ու սփոփեցուցիչ: Ոչ, ես կյանքիս ընթացքում մի այնպիսի ներդաշնակ զույգ չէի տեսել և չպիտի տեսնեմ: Նրանց ամեն մի նայվածքը արտահայտում էր սեր, ամեն մի շարժումը՝ սիրո նշան: Ինձ թվում էր, որ նրանք իսկապես մի արարած են կազմում բնության բախտաբեր կատակով երկուսի բաժանված: Ես անթարթ աչքերով նայում էի նրանց և, ականջներս լարած, լսում էի նրանց փոխադարձ փաղաքշանքները: Նախանձ չէի զգում իմ սրտում և որևէ գրգռումն: Ես միայն հիանում էի, կարծես նրանց թախտի ստվերը ինձ վրա սփռելով բախտավոր էք դարձնում ինձ ևս:

Սիրո՞ւմ ես ինձ, կրկնում էր կինը:

Մի արտասանիր այդ բառը: Նա շատ ժլատ է, որպեսզի կարողանա արտահայտել իմ զգացման չափը: Մարդիկ այդ բառը աղավաղել են:

Ի՞նչ գործ ունենք մարդկանց հետ, մենք նրանցից հեռու ենք: Նայիր, ահա երկրի երեսում սփռված են նրանք... Ախ, որքան չնչին են, ողորմելի: Լինել այս մաքուր, անարատ և վսեմ բնության մի հատորը և այդչափ ընկղմվել կյանքի տիղմի մեջ... Օ՜ֆ, այդ անտանելի է...

Եվ մենք երբեք չպիտի իջնենք նրանց շարքը:

Օհ, երբեք... Ի՞նչ, դու կամենում ես, որ ես լինեմ այն տիկնոջ պե՞ս, նայիր, ինչպես ոգևորված գովում է իր մարդու խելքը, որովհետև այդ մարդը նրա կուրծքը զարդարել է մի ադամանդով:

Իսկ այն տղամարդը ինչպես կատաղել է, որ ընկերը նրանից հնգի փոխարեն վեց ոսկի է պահանջել մի բրդի կտորի համար:

Կռվեցեք, գոչեց կինը մի ուրախ քրքիջ արձակելով, իսկ մեր հարստությունը անբաժան է, որովհետև նա փոխադարձ սերն է:

Եվ նրանք դարձյալ համբուրվեցին:

Բայց ո՞վ է ալն խղճալին, որ մեջքի վրա խոտի մեջ պառկած դիտում է մեզ:

Ես սոսկացի այդ գոչյունից, երեսս մի կողմ դարձրի: Այո, ես խղճալի էի նրանց աչքում և երբեք ինքս ինձ այնքան դժբախտ չէի համարած, որքան նույն րոպեին: Քնած նախանձը հանկարծ զարթնեց իմ մեջ: Այն, ինչ որ ես որոնել էի ինձ համար կյանքի ընթացքում ու չէի գտել, վայելում էր մի ուրիշը, իմ աչքի առաջ և ինձ ծաղրում: Ես կամեցա բողոքել, կատաղել անգամ: Բայց բերանս չբացվեց, որ կարողանայի մի խոսք արտասանել, ես զգացի մի անբնական անդորրություն: Իսկ նրանք ինձ չէին ծաղրում, այլ խղճում էին, անկեղծ խղճում: Այն ժամանակ իմ կատաղությունն անցավ. ինքս ես ինձ սկսեցի խղճալ: Ընկճվեցի ճնշվեցի, դարձա բոլոր ուժերից զրկված մի մարմին և միայն կարողացա գոչել .

Ո՞վ բախտավորներ, ես ձեզ չեմ նախանձում բայց գթացեք ինձ ու ասացեք՝ ինչի՞ց է բաղկանում մարդու բուռն երջանկությունը:

Սիրուց, գոչեց կինը:

Ես սիրել եմ, պատասխանեցի ես, և փոխադարձաբար սիրվել, բայց երկար չի տևել մեր սերը, և ես այժմ անբախտ եմ:

Ո՞վ է եղել քո սիրո առարկան:

Մի կին:

Միայն մե՞կը:

Ուրիշ ի՞նչ էիր կամենում: Նա գեղեցիկ էր: